

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԴԱՎԻԹ ՀՐԱՆՏԻ

**ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
(1901-1910)**

**ԺԷ.00.02 - «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ**

МЕЛКОНЯН ДАВИД ГРАНТОВИЧ

**АРМЯНСКАЯ МУЗЫКАЛЬНАЯ ЖИЗНЬ В ЗАКАВКАЗЬЕ
(1901-1910)**

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени
кандидата искусствоведения по специальности
17.00.02 – “Музыкальное искусство”**

ЕРЕВАН – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

Գիտական ղեկավար՝

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ասատրյան Աննա Գրիգորի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

արվեստագիտության դոկտոր
Ռուխյան Մարգարիտա Աշոտի

արվեստագիտության թեկնածու
Ամիրադյան Գայանե Աշոտի

Առաջատար կազմակերպություն՝

Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. հունիսի 12-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղդասարյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. մայիսի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ասատրյան Ա. Գ.

Тема диссертации утверждена в Ереванской государственной консерватории им. Комитаса.

Научный руководитель -

доктор искусствоведения, профессор
Асатрян Анна Григорьевна

Официальные оппоненты -

доктор искусствоведения
Рухкян Маргарита Ашотовна

кандидат искусствоведения
Амирагян Гаяне Ашотовна

Ведущая организация – Армянский государственный педагогический университет им. Х.Абовяна

Защита диссертации состоится 12-го июня 2017г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: 0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 12-го мая 2017г.

Ученый секретарь специализированного совета,
доктор искусствоведения, профессор

Асатрян А. Г.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայ երաժշտության պատմության կարևոր փուլերից է XX դարասկզբի առաջին տասնամյակը, երբ հայ երաժշտական կյանքում տեղի ունեցան մի շարք նշանակալից իրադարձություններ՝ դրվեց ազգային դասական երաժշտության հիմքը, թափ առավ կատարողական արվեստը, ձևավորվեց ազգային երաժշտագիտությունը, աշխուժացավ երաժշտության գործիչների երաժշտական-հասարակական գործունեությունը:

Թեմայի մշակվածության աստիճանը: Հայ երաժշտագետներն անդրադարձել են այս տասնամյակում գործած երաժիշտներին՝ նրանց նվիրված իրենց հետազոտություններում և ընդհանրացնող ակնարկներում: Արժեքավոր են Մաթևոս Մուրադյանի «Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում» և Ալեքսանդր Շահվերդյանի «Հայ երաժշտության պատմության ակնարկներ. XIX-XX դդ. (Մինչսովետական շրջան)» մենագրությունները: Նշելի է Մարգարիտ Հարությունյանի և Աննա Բարսամյանի «Հայ երաժշտության պատմություն» դասագիրքը, որի ութերորդ՝ «Հայ երաժշտական մշակույթի զարգացումը XX դարի առաջին երկու տասնամյակներում»¹ գլխում տեղ է գտել տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ համառոտ ակնարկը: Արժեքավոր է Ռուզաննա Մազմանյանի «Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910թթ.»², որը «էապես համալրում է մեր պատկերացումները XXդ. երաժշտական մշակույթում տեղի ունեցող ստեղծագործական խմորումների ու երաժշտահասարակական կյանքի զարկերակի մասին»³: Իսկ Աննա Ասատրյանի՝ «Խմբագրի կողմից» ծավալուն առաջաբան⁴ շնորհիվ «մեր առջև հառնում է տարեգրությունն ընդգրկող ժամանակահատվածի տեսանելի և դինամիկ պատկերը»⁵:

Բարձր գնահատելով 20-րդ դարի առաջին տասնամյակի հայ երաժշտական կյանքի ուսումնասիրության բնագավառում հայ երաժշտագետների աշխատանքը, որոնք այդ ուղղությամբ խիստ կարևոր ու արժեքավոր քայլեր են, միևնույն ժամանակ չենք կարող հավաստել, որ այդ ասպարեզում ամեն ինչ ուսումնասիրված է, իսկ նյութը՝ սպառված: Մինչ օրս առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել հայ երաժշտական կյանքը Անդրկովկասում՝ 20-րդ դարի առաջին տասնամյակում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է Անդրկովկասում 20-րդ դարի առաջին տասնամյակում ծավալված հայ երաժշտական կյանքի համակողմանի ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակից բխող խնդիրներն են՝

➤ Թիֆլիսում հայ երաժիշտների գործունեության ուսումնասիրության ընթացքում անդրադառնալ կոմպոզիտոր-խմբավարներ Քրիստափոր Կարա-Մուրզայի, Մակար Եկմայանի և Կոմիտասի, երգիչներ Մարգարիտ Բաբայանի, Հելլինե Ղորղանյանի, Նադեժդա Պապայանի, Ստեփան Բարխուդարյանի, Արշակ Կոստանյանի, Տիգրան Նաբանդյանի, Բեգլար Ամիրջանի և այլոց, գործիքային կատարողական արվեստի ներկայացուցիչներ՝ դաշնակահար Հովսեփ Տեր-Դավթյանի, ջութակահարներ Դավիթ Դավթյանի, Հայկ Կյուտենյանի և Հովհաննես Նաբանդյանի թիֆլիսյան հյուրախաղերին:

¹ **Հարությունյան Մ., Բարսամյան Ա.,** Հայ երաժշտության պատմություն, Երևան, 1996, էջ 103-108:

² **Մազմանյան Ռ.,** Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, Երևան, 2006, էջ 23-206:

³ **Երեջևյան Լ.,** Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, գրախոսություն, Լրաբեր հասարակական գիտությունների, 2006, N 3, էջ 261:

⁴ **Ասատրյան Ա.,** Խմբագրի կողմից, **Մազմանյան Ռ.,** Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, Երևան, 2006, էջ 9-22:

⁵ **Երեջևյան Լ.,** Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, գրախոսություն, Լրաբեր հասարակական գիտությունների, 2006, N 3, էջ 261:

Քննության առնել Վասիլի Կորգանովի երաժշտագիտական և Ք.Կարա-Մուրզայի երաժշտական քննադատական գործունեությունը:

➤ Քննության առնել Կոմիտասի, Եղիշե Բաղդասարյանի և Դավիթ Դավթյանի համերգային գործունեությունը Բաքվում, Անտոն Մայիլյանի ստեղծագործական և հասարակական գործունեությունը:

➤ Ուսումնասիրել Շուշիի երաժշտական կյանքը, անդրադառնալ Ք.Կարա-Մուրզայի, Ստեփան Դեմուրյանի, Եղիշե Բաղդասարյանի, Գրիգոր Սյունիի, Արշակ Կոստանյանի և այլոց համերգներին:

➤ Ուսումնասիրել Երևանի Նահանգի՝ Երևանի, Էջմիածնի և Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը: Երևանի նահանգի երաժշտական անցուղարձն ուսումնասիրելիս հետևել Ս.Դեմուրյանի, Ե.Բաղդասարյանի և Կոմիտասի համերգային գործունեությանը Երևանում: Էջմիածնի երաժշտական կյանքն ուսումնասիրել՝ կենտրոնական նշանակություն տալով Կոմիտասի գործունեությանը, իսկ Ալեքսանդրապոլի դեպքում անդրադառնել Նիկողայոս Տիգրանյանի, Արմեն Տիգրանյանի և Արշակ Բրուտյանի գործունեությանը, Մարգարիտ Բաբայանի, Հ.Նալբանդյանի և Ա.Կոստանյանի հյուրախաղերին:

Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսության մեջ առաջին անգամ ուսումնասիրվել է հայ երաժշտական կյանքը 20-րդ դարի առաջին տասնամյակում՝

- Անդրկովկասի վարչական և մշակութային կենտրոն Թիֆլիսում,
- Անդրկովկասի արդյունաբերական կենտրոն Բաքվում,
- «Անդրկովկասի կոնսերվատորիայում»՝ Շուշիում,
- Երևանի նահանգում՝ Երևանում, Էջմիածնում, Ալեքսանդրապոլում:

Ուսումնասիրության համար **նյութ** են ծառայել ժամանակի պարբերական մամուլը՝ ինչպես անդրկովկասյան, այնպես էլ ռուսական (այդ թվում՝ «Մշակ», «Տարազ», «Ժամանակ», «Ախուրեան», «Кавказский вестник», «Тифлисский листок», «Закавказье», «Русская музыкальная газета», «Театр и искусство», «Санкт-Петербургские ведомости» և այլն), որտեղ անդրադարձ է եղել Անդրկովկասի համերգային կյանքին ու Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում գտնվող Ա.Մայիլյանի, Ե.Բաղդասարյանի, Բ.Ամիրջանյանի, Ն.Տիգրանյանի, Մ.Բաբայանի, Ա.Տիգրանյանի, Հ.Նալբանդյանի և այլոց արխիվներում պահպանվող համապատասխան վավերագրերը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ուսումնասիրության արդյունքները մի կողմից՝ անհրաժեշտ քայլ կդառնան հայ երաժշտության պատմության շարադրման ճանապարհին և կարող են ընդգրկվել բուհական համապատասխան դասընթացներում, մյուս կողմից՝ ելակետ կհանդիսանան նշված ժամանակաշրջանում հայկական մյուս գաղթառնների երաժշտական կյանքի ուսումնասիրության համար:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի 2017թ. ապրիլի 18-ի նիստում: Հիմնական դրույթներն արտացոլվել են 3 միջազգային գիտաժողովներում հեղինակի կարողացած զեկուցումներում (Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական 10-րդ նստաշրջան՝ նվիրված Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին, Երևան, 10-11 նոյեմբերի, 2015, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական 11-րդ նստաշրջան՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին, Երևան-Արզակյան, 30 սեպտեմբերի – 2 հոկտեմբերի, 2016, «Երաժշտագիտությունն արդի փուլում» երրորդ միջազգային երիտասարդական գիտաժողով, Երևան, 6-8 հոկտեմբերի, 2016) և 5 գիտական հոդվածներում:

Աշխատության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից (Գլուխ Առաջին – «Հայ երաժշտական կյանքը Թիֆլիսում», Գլուխ Երկրորդ – «Հայ երաժշտական կյանքը Բաքվում, Շուշիում և Երևանի նահանգում»), եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

1901-1910թթ. հայ երաժշտական գործիչները թիֆլիսում ստեղծում են «Արևելյան երաժշտական ընկերությունը» (1907, Վ.Քեշիշյան), «Երաժշտական լիգան» (1908, Ռ.Մելիքյան և Ա.Մանուկյան) և «Հայկական խմբերգային ընկերությունը» (1910): Իր գործունեության ծավալով աչքի էր ընկնում «Երաժշտական լիգան», որի նպատակն էր բարեկարգել երաժշտության դասավանդման համակարգը: Հրատարակվում են Ա.Մանուկյանի «Փնջիկները», Ռ.Մելիքյանի և Ա.Մանուկյանի «Երաժշտական այբբենարանը» և այլ մանկական ժողովածուներ: Ավելի ուշ «Երաժշտական լիգան» միավորվեց Սպ.Մելիքյանի հիմնադրած «Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության» հետ (1912): Գարեգին Լևոնյանի (1872-1947) ստեղծած «Գեղարվեստ» (1908) հանդեսն Անդրկովկասում առաջին անգամ տպագրում էր հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների նոտաները:

1901-1910թթ. Թիֆլիսի հայ երաժշտական կյանքը ուսումնասիրելու համար անդրադարձել ենք առավել վառ գործիչներին՝ դասակարգելով ըստ գործունեության ոլորտի՝ կոմպոզիտորներ-խմբավարներ, երգարվեստի ներկայացուցիչներ, գործիքային կատարողական արվեստի ներկայացուցիչներ և երաժշտագետներ:

1. 1. Կոմպոզիտորներ-խմբավարներ

1.1.1. Քրիստափոր Կարա-Մուրզա (1853-1902)

1901թ. հունվարի 17-ին Ք.Կարա-Մուրզան հրավիրվում է ղեկավարելու Կովկասյան ցուցահանդեսների երաժշտության բաժինը⁶: Փետրվարի 11-ին իր սիրողական երգեցիկ խմբով ելույթ է ունենում Թիֆլիսի ժողովրդական ընթերցանությունների դահլիճում⁷: Մարտի 17-ին Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում տեղի է ունենում Կարա-Մուրզայի 70 հոգուց բաղկացած սիրողական երգեցիկ խմբի համերգը⁸: Ապրիլի 2-ին Կարա-Մուրզան իր ղեկավարած երգչախմբով կրկին ելույթ է ունենում Թիֆլիսի ժողովրդական ընթերցանությունների դահլիճում⁹: Հոկտեմբերին Կարա-Մուրզայի երգեցիկ խումբը երկու «հանրամատչելի ժողովրդական» համերգ է ունենում Կովկասյան ցուցահանդեսների դահլիճում¹⁰: Հոկտեմբերի 28-ի համերգին խումբը ելույթ է ունենում ազգային տարազներով. «...Համերգը վերջացավ ազգային պարերով»¹¹: 1902թ. փետրվարի 20-ին՝ մահից մոտ մեկ ամիս առաջ, Ք.Կարա-Մուրզան իր երգեցիկ խմբով ելույթ է ունենում Թիֆլիսի ժողովարանի դահլիճում¹²: 1902թ. մարտի 27-ին Ք.Կարա-Մուրզան հանկարծամահ է լինում: Նրա գործը շարունակեց եղբայրը՝ Պողոս Կարա-Մուրզան, ով հանգուցյալ եղբոր ղեկավարած երգեցիկ խմբերը վերակազմելով, նոր մարդկանց ներգրավելով կազմակերպում էր համերգներ՝ իր և եղբոր մշակած երգերից:

1.1.2. Մակար Եկմայան (1856-1905)

1905թ. մարտի 6-ին Թիֆլիսում վախճանվում է Մ.Եկմայանը¹³: Մարտի 12-ին, շաբաթ երեկոյան, Հավլաբարում կատարվեց Եկմայանի հոգեհանգիստը, որին ներկա էին Ներսիսյան դպրոցի աշակերտները և մի քանի դասախոսներ: Եկմայանին հուղարկավորեցին հաջորդ օրը՝ Խոջիվանքի գերեզմանատանը: «Եւ Եկմայեանի թանկագին աճիւնը յավիտենական հանգիստ գտաւ Գր.Արծրունու գերեզմանի մօտ: Թաղման հան-

⁶ Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, էջ 24:

⁷ Ներքին լուրեր, «Մշակ», 13 փետրվարի, N32, Թիֆլիս, 1901:

⁸ Երիցեան Աստ., Կարա-Մուրզայի կոնցերտը, «Մշակ», 20 մարտի, N62, Թիֆլիս, 1901:

⁹ Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, էջ 29:

¹⁰ Ներքին լուրեր, «Մշակ» 23 հոկտեմբերի, N235, Թիֆլիս, 1901:

¹¹ Ներքին լուրեր, «Մշակ», 30 հոկտեմբերի, N241, Թիֆլիս 1901:

¹² Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, էջ 44:

¹³ Տեր-Եզնիկ, Մակար Եկմայան, «Մշակ», 8 մարտի, N40, Թիֆլիս, 1905:

դէսը վերջացաւ. Ամենքը հեռացան. միայն նրան սրտով սիրող աշակերտութիւնը՝ երգեցիկ խումբը և նախկին աշակերտները մնացին նրա թարմ հողակոյտի շուրջը... Մեր հրաժեշտի ողջոյնի փոխարէն հնչեցորինք այնտեղ հանգուցեայի «Ով Հայրց Աստուած» քառածայն խմբերգը...», -կգրի Ա.Մայիլյանը¹⁴: «...Յանձին Մակար Եկմայեանի հայ եկեղեցական երաժշտութիւնը կորցրեց իր տաղանդաւոր և շնորհալի աշխատաւորին. վերջին տասնամեակի ընթացքում Թիֆլիսի և ուրիշ տեղերի հայ հասարակութիւնը անելի մեծ սիրով էր լսում եկեղեցիներում սուրբ պատարագի արարողութիւնը՝ շնորհիւ հանգուցեալ Եկմայեանի ներդաշնակած քառածայն պատարագի...»¹⁵: 1910թ. ապրիլի 6-ին, Մ.Եկմայեանի մահի վրէժ 5-րդ տարելիցի առիթով «Աղբյուր-Տարագ»-ին կից Գրական-գեղագիտական արահում տեղի է ունենում երեկոյթ, որին մասնակցում է Թիֆլիսի օպերային սիմֆոնիկ նվագախումբը՝ իտալացի դիրիժոր Ա.Պրիվետերայի ղեկավարութեամբ: Եկմայեանի և նրա գործունեության մասին զեկուցեցին Ստ.Մալխասյանը և Հ.Տեր-Դավթյանը: Վերջինս բնորոշեց Եկմայեանին իբրև առաջնակարգ երաժիշտ-տեսաբանի, ով արժանացել է Անտոն Ռուբինշտեյնի, Ջուզեպե Վերդիի և այլ նշանավոր կոմպոզիտորների զովեստներին: «...Եթէ չըլինէր հայկական կաշկանդիչ իրականութիւնը՝ Եկմայեանն պիտի դասվէր համաշխարհային երաժշտական հանճարեղ քննադատների շարքում...»¹⁶:

1.1.3. Կոմիտաս (1869-1935)

Համերգներով և դասախոսություններով Կոմիտասը հանդես է եկել 7-8 անգամ: Կոմիտասի մասին թիֆլիսյան մամուլում առաջին հիշատակումը հայտնվում է 1902թ. հունիսին՝ «Кавказский вестник»-ում. Վ.Կորգանովը «Взгляд и нечто» բաժնում անդրադառնում է 1901թ. գերմանական «Zeitschrift für Armenische Philologie» հանդեսում հրապարակված Կոմիտասի «Հայ գեղջուկ պարը» հոդվածին¹⁷: 1902-ին տեղի է ունենում Կոմիտասի և Մարգարիտ Բաբայանի ծանոթությունը, որի շնորհիվ Մ.Բաբայանը հասկանում է, «թէ հայ երաժշտութիւն էլ կայ աշխարհիս երեսին...»¹⁸: Թիֆլիսի հաջորդ առնչությունը Կոմիտասի գործունեությանը տեղի է ունենում 1905թ. ապրիլին: Ապրիլի 1-ին և 3-ին Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում տեղի են ունենում Կոմիտասի և նրա երգչախմբի համերգները: Կոմիտասի համերգային այցի մասին լուրը մեծ աշխուժություն է առաջ բերում Թիֆլիսի երաժշտական ասպարեզում¹⁹: Ապրիլմեկյան համերգը կարևոր իրադարձություն էր Թիֆլիսի երաժշտական կյանքում²⁰: «Տարագի» 1905թ. N11-ում տպագրվում է «Գարուն ա» երգը²¹:

Կոմիտասի համերգներից մեկին ներկա Թիֆլիսի առաջին գիմնազիայի աշակերտ, հետագայում՝ հայ անվանի արվեստաբան Ռուբեն Դրամբյանը Կոմիտասի ելույթից հետո զգում է, որ ինքը հայ է²²:

¹⁴ Մայիլյան Անտոն, Մակար Եկմայան (Յիշողութիւններ), Մակար Եկմայան (վավերագրեր, նամականեր, հուշեր, հոդվածներ), Երևան, 2006, էջ 79:

¹⁵ Հարությունյան Իս., Մակար Եկմայեան, «Տարագ», N8, Թիֆլիս, 1905:

¹⁶ Մ.Եկմայեանի յիշատակին, «Տարագ», N4, Թիֆլիս, 1910:

¹⁷ Տե՛ս Корганов В., Взгляд и нечто, «Кавказский вестник», N6, Тифлис, 1902, стр. 36-48.

¹⁸ Բաբայեան Մարգարիտ, Տպաւորութիւններ Կոմիտաս վարդի անձին ու գործին շուրջ, Նավասարդ գրական եւ գեղարուեստական Տարեգիրք, 1914 – Կ.Պոլիս, էջ 304:

¹⁹ Ներքին լուրեր, «Մշակ», 25 մարտի, N54, Թիֆլիս 1905:

²⁰ Սիրող, Կոմիտաս վարդապետի հոգևոր-ժողովրդական համերգը, «Մշակ», 5 ապրիլի, N62, Թիֆլիս, 1905:

²¹ Տե՛ս «Տարագ», N11, Թիֆլիս, 1905:

²² Այս տեղեկությունը մեզ է հաղորդել մեր ատենախոսության գիտական ղեկավար Աննա Ասատրյանը, ում այդ մասին պատմել է Ռուբեն Դրամբյանի դուստրը՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպար-

Ապրիլի 7(6)-ին, Հովնանյան օրիորդաց դպրոցի դահլիճում, Կոմիտասը հանդես է գալիս դասախոսությամբ՝ «Հայ ժողովրդական և եկեղեցական երգերը» թեմայով. «Ցանկալի էր, որ Կոմիտասը հնարաւոր կացուցանէր իր ժամանակը բաժանել ս.Էջմիածնայ ճեմարանի և Թիֆլիսի մէջ: Շաբաթայ կէսը մնալով ս.Էջմիածնում, իսկ միւս կէսը Թիֆլիսում: Թիֆլիսում Կոմիտասին հրաւիրում ենք հիմնել երգեցողութեան դասընթացներ, կազմել երկսեռից խմբեր և ազգային ժողովրդական երգը հաստատ հիմունքների վրայ դնել»²³: Այս դասախոսությունը Կոմիտասը կրկնում է նաև մեկ տարի անց՝ 1906թ. ապրիլի 6-ին, Հովնանյան օրիորդաց դպրոցի դահլիճում: 1908թ. դեկտեմբերի 6-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում տեղի է ունենում համերգ՝ Կովկասյան հայոց բարեգործական միության օգտին: Երգչախումբը ղեկավարում էին Կոմիտասը և Ազատ Մանուկյանը²⁴: 1909թ. մարտի 3-ին, Արքունական թատրոնում կայացած հոգևոր համերգին մասնակցում էին ռուսական, վրացական, հայկական երգչախմբեր: Հայկական երգչախումբը ղեկավարում էր Կոմիտասը²⁵: Հաջորդ օրը Ներսիսյան դպրոցում Կոմիտասը կարդաց դասախոսություն «Հայ ժողովրդական երգն ու հոգևոր երաժշտությունը, նրանց միջև եղած կապը» թեմայով, կատարեց «Անտունին»²⁶: 1910թ. հունիսին Թիֆլիսի մամուլը հայտնում է, որ Կոմիտասը հեռանում է Էջմիածնից²⁷:

1.2. Երգարվեստ

XX դարասկզբին Թիֆլիսում ելույթներ են ունեցել Հեղինե Տերյան-Ղորղանյանը, Մարգարիտ Բաբայանը, Նադեժդա Պապայանը, Ստեփան Բարխուդարյանը, Տիգրան Նաթանյանը, Ներսես Ղուկասյանը, Արշակ Կոստանյանը, Բեգլար Ամիրջանը և այլք:

1.2.1. Մարգարիտ Բաբայան (1874-1968)

Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, 1901թ. նոյեմբերի 18-ին Մ.Բաբայանի մենահամերգն է²⁸: Երկրորդ բաժնում երգչուհին հանդես է գալիս իբրև դաշնակահարուհի: «Ի վերջոյ Մ.Ա.Բաբայեան հասարակութեան խնդրանքը երգեց «Արի իմ տխրակ» և «Կռունկ» երգերը հայերէն: Երգչուհուն շատ լաւ ընդունեցին և յարգեցին երկու ծաղկեայ կողով և մի փունջ մատուցանելով»²⁹: Մ.Բաբայանի հաջորդ համերգը տեղի ունեցավ 1903թ. նոյեմբերի 26-ին, Թիֆլիսի Գերմանական եկեղեցում³⁰:

1.2.2. Հեղինե Ղորղանյան (Տերյան-Ղորղանովա) (1864-1937)

1901թ. հունվարի 31-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում տեղի է ունենում Տերյան-Ղորղանյանի համերգը: Փետրվարի 7-ին Արքունական թատրոնում ներկայացված՝ Զ.Վերդիի «Աիդա» օպերայում Տերյան-Ղորղանյանը հանդես է գալիս Աիդայի դերերգով: Փետրվարի 9-ին երգչուհին ելույթ է ունենում Զ.Վերդիի հիշատակին նվիրված երեկոյին³¹: Փետրվարի 21-ին Արքունական թատրոնում Ժ.Բիզեի «Կարմենում» Տերյան-Ղորղանյանը կատարում է Կարմենի դերերգը³²: Փետրվարի 22-ին երգչուհին Թիֆլիսի արտիստական

վեստի բաժնի գլխավոր գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Իրինա Դրամյանը:

²³ Գեղարունեստական քրոնիկոն, «Տարագ», N12, Թիֆլիս, 1905:

²⁴ Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, էջ 149:

²⁵ Սիրող, Հոգևոր համերգ, «Մշակ», 5 մարտի, N47, Թիֆլիս, 1909:

²⁶ Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, էջ 159:

²⁷ Ներքին լուրեր, «Մշակ», 2 հունիսի, N117, Թիֆլիս, 1910:

²⁸ Կարա-Մուրզա, Կոնցերտ, «Մշակ», 20 նոյեմբերի, N258, Թիֆլիս, 1901: **Tigo**, Թատրոն երաժշտութիւն, «Տարագ», N45, Թիֆլիս, 1901:

²⁹ Կարա-Մուրզա, Կոնցերտ, «Մշակ», 20 նոյեմբերի, N258, Թիֆլիս, 1901:

³⁰ Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, էջ 67:

³¹ Թատրոն երաժշտութիւն, «Տարագ», N11, Թիֆլիս 1901:

³² Կարա-Մուրզա, Օպերային ներակայացումները, «Մշակ», N42, 24 փետրվարի, Թիֆլիս, 1901:

ընկերության դահլիճում կայացած համերգին կատարում է մի քանի երգեր և հատվածներ Ժ.Մասնեի «Hérodiade» օպերայից³³:

1.2.3. Նադեժդա Պապայան (1868(70)-1906)

1901թ. փետրվարի 4-ին Թիֆլիսի արքունական թատրոնում չորրորդ անգամ ներկայացվում է Մասնեի «Մոխրոտիկ» օպերան, որտեղ Մոխրոտիկի դերերգը կատարում է Ն.Պապայանը³⁴: Ն.Պապայանի ելույթները Թիֆլիսում տեղի են ունեցել 1904թ. նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 20-ը: Երգչուհին հանդես է եկել 10 ելույթներով տարբեր օպերային դերերգերով և հիացրել իր բարձր վարպետությամբ³⁵: Նոյեմբերի 30-ին նա հանդես է գալիս Արքունական թատրոնում Ջ.Վերդիի «Տրավիատա» օպերայում Վիոլետայի դերերգով³⁶: Դեկտեմբերի 3-ին բեմադրվել էր Չայկովսկու «Պիկովայա դամա», իսկ դրանից հետո, մոտ օրերին՝ Շ.Գունյի «Ֆաուստ» օպերաները: Երգչուհին Չայկովսկու օպերայում հիանալի կատարեց Լիզայի դերերգը, իսկ «Ֆաուստում» հանդես գալով Մարգարիտայի դերում՝ գերեց հանդիսատեսին քնքշությամբ³⁷: Դեկտեմբերի 7-ին Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայում հանդես է գալիս Տալյանայի դերերգով³⁸: Դեկտեմբերի 14-ին Ն.Պապայանը կատարեց Մաշայի դերերգը Նապրավնիկի «Դուբրովսկի» օպերայում³⁹, դեկտեմբերի 16-ին հանդես եկավ Մարֆայի դերում Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն» օպերայում, իսկ 18-ին՝ Զիլդայի դերում Վերդիի «Ռիգուլետո» օպերայում: Դեկտեմբերի 20-ին նշանակված էր Ն.Պապայանի վերջին ելույթը՝ Շ.Գունյի «Ռոմեո և Ջուլիետ»-ում, սակայն ներկայացումից մեկ օր առաջ հայտարարվեց, որ կկատարվի Ջ.Վերդիի «Տրավիատան», որով և սկսվել էր երգչուհու ելույթների շարքը⁴⁰: Երգչուհին հաջորդ տարում ևս ունեցավ մի քանի ելույթ:

1.2.4. Երգչուհիներ Ե.Սարաջևա, Ասատուրավա և տիկին Անահիտ

Անդրադարձել ենք Սարաջևայի⁴¹, Ասատուրավայի⁴² և տ.Անահիտի⁴³ 1901թ. համերգներին:

1.2.5. Ստեփան Բարխուդարյան (?)

1901-1906թթ. Թիֆլիսում հանդես եկած հայ երգիչներից էր Ստեփան Բարխուդարյանը: 1901թ. հոկտեմբերի 7-ին Ս.Բարխուդարյանը Թիֆլիսի ձմեռային ժողովարանի դահլիճում հանդես է գալիս համերգով⁴⁴: Մեկ տարի անց՝ սեպտեմբերի 25-ին, Բարխուդարյանը հանդես է գալիս Արտիստական ընկերության դահլիճում⁴⁵: 1904թ. դեկտեմբերի 5-ին Արտիստական ընկերության դահլիճում տեղի է ունենում Ս.Բարխուդարյանի համերգը, նվագակցում է Նիկողայոս Տիգրանյանը⁴⁶: Դեկտեմբերի 19-ին Թիֆլիսի ժողովարա-

³³ Ներքին լուրեր, «Մշակ», 24 փետրվարի, N42, Թիֆլիս 1901:

³⁴ Կարա-Մուրզա, Օպերային ներկայացումները, «Մշակ», 6 փետրվարի, N27, 1901:

³⁵ Սիրող, Թատրոն և երաժշտություն, «Մշակ», 22 դեկտեմբերի, N282, Թիֆլիս, 1904:

³⁶ Սիրող, Օպերային ներկայացումները, «Մշակ», 2 դեկտեմբերի, N265, Թիֆլիս, 1904:

³⁷ Սիրող, Թատրոն և երաժշտություն, «Մշակ», 7 դեկտեմբերի, N269, Թիֆլիս, 1904:

³⁸ Սիրող, Թատրոն և երաժշտություն, «Մշակ», 9 դեկտեմբերի, N271, Թիֆլիս, 1904:

³⁹ Սիրող, Թատրոն և երաժշտություն, «Մշակ», 16 դեկտեմբերի, N277, Թիֆլիս, 1904:

⁴⁰ Սիրող, Թատրոն և երաժշտություն, «Մշակ», 22 դեկտեմբերի, N282, Թիֆլիս, 1904:

⁴¹ Владдерж В., Музыка в провинции: Тифлис, «Русская музыкальная газета», 10-17 июля, N23-24, СПб., 1901, стр. 626.

⁴² Ներքին լուրեր, «Մշակ», 12 սեպտեմբերի, N201, Թիֆլիս 1901: Կարա-Մուրզա, Օպերային ներկայացումները, «Մշակ», 11 դեկտեմբերի, N274, Թիֆլիս. 1901:

⁴³ Тиге, S. Անահիտի Դեբիտը, «Տարագ», N47, Թիֆլիս, 1901:

⁴⁴ Կարա-Մուրզա, Կոնցերտ, «Մշակ», 9 հոկտեմբերի, N223, Թիֆլիս, 1901:

⁴⁵ Ներքին լուրեր, «Մշակ», 25 սեպտեմբերի, N211, Թիֆլիս, 1902:

⁴⁶ Ներքին լուրեր, «Մշակ», 5 դեկտեմբերի, N268, Թիֆլիս, 1904:

նի դահլիճում Հայուիյաց բարեգործական ընկերության կազմակերպած համերգ-երեկոյ-թին Ս.Բարխուդարյանը «երգեց իտալերէն «Vorei Morrir» և հայերէն «Քուն եղիր բալաս», «Անցաւ տարին», «Արի իմ տխրակ»...»⁴⁷: 1905թ. ապրիլի 26-ին Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի համերգային դահլիճում տեղի է ունենում Ս.Բարխուդարյանի համերգը⁴⁸: 1906թ. մարտի 2-ին Թիֆլիսի Արքունական թատրոնում Ռ.Լեոնկավալոյի «Պայացներ» օպերայում Կանիոյի դերերգով հանդես է գալիս Ս.Բարխուդարյանը: Սա Բարխուդարյանի դերյուտն էր օպերային բեմում⁴⁹:

1.2.6. Արշակ Կոստանյան (1866–1919)

Տևական ժամանակ Թիֆլիսում ելույթներ չունենալուց հետո, 1910թ. մայիսի 25-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում Արշակ Կոստանյանը հանդես է գալիս համերգով⁵⁰: Հաջորդ համերգը տեղի է ունենում օգոստոսի 18-ին Թիֆլիսի արտիստական ընկերության ամառային դահլիճում: Իր ելույթը Կոստանյանը սկսեց Կանիոյի «Ծիծաղի՛ր, միմա» (Vesti la giubba) արիայով Ռ.Լեոնկավալոյի «Պայացներ» օպերայից, «...որը նա կատարեց մեծ զգացմունքով և հմուտեամբ...»⁵¹:

1.2.7. Տիգրան Նալբանդյան (1878-1954)

Թիֆլիսի ժողովարանի դահլիճում 1901թ. նոյեմբերի 25-ին տեղի է ունենում Տիգրան Նալբանդյանի համերգը՝ մասնակցությամբ դաշնակահար Կեսենրի և թավջութակահար Դորոխոստովի⁵²: 1903թ. փետրվարի 11-ին Տ.Նալբանդյանն իբրև մենակատար մասնակցում է Ա.Մամաջանի ղեկավարած Թիֆլիսի հալ երգիչներիգ կազմված երգ-չախմբի համերգին, իսկ փետրվարի 15-ին հանդես է գալիս Թիֆլիսի ժողովարանում կալածած գրական-երաժշտական երեկոյին: Մարտի 6-ին Տ.Նալբանդյանը մենահամերգով հանդես է գալիս Թիֆլիսի ժողովարանի դահլիճում՝ կատարելով Չալկովսկու, Ռիմսկի-Կորսակովի, Ռուբինշտեյնի, Սպենդիարյանի գործերից⁵³: 1906թ. մարտի 28-ին Տ.Նալբանդյանն իբրև հրավիրված կատարող ելույթ է ունենում Բ.Ամիրջանի համերգին: «Մշակը» նրա անվանում է «գեղեցիկ երգող, համակրական տեսօր Տիգրան Նալբանդյան»⁵⁴:

1.2.8. Ներսես Ղուկասյան (? - 1944)

1910թ. հոկտեմբերի 8-ին Արքունական թատրոնում Բորոդինի «Իշխան Իգոր» օպերայում Ն.Ղուկասյանը կատարում է Իշխանի որդու՝ Վլադիմիրի դերերգը⁵⁵: 1910թ. փետրվարի 5-ին Արքունական թատրոնում Ռ.Պլանկետի «Կոռնելիյան գանգակներ» կատակերգական օպերայում Ն.Ղուկասյանը հանդես է գալիս Գրենիշի դերերգով⁵⁶: Փետրվարի 10-ին Արքունական օպերային թատրոնում Դ.Սլավյանսկու «Բոյար Օրշա» օպերայի պրեմիերայի ժամանակ Ն.Ղուկասյանը հանդես է գալիս Արսենի դերերգով: Այս ներկայացումը Ն.Ղուկասյանի բենեֆիսն էր⁵⁷:

1.2.9. Բեգլար Ամիրջան (1868-1937)

Բեգլար Ամիրջանը 1903-1904թթ. հրավեր է ստանում աշխատելու Արքունական

⁴⁷ Սիրող, Թատրոն եւ երաժշտութիւն, «Մշակ», 21 դեկտեմբերի, N281, Թիֆլիս, 1904:

⁴⁸ Գեղարեստական քրօնիկ, «Տարագ», N14, Թիֆլիս, 1905:

⁴⁹ Սիրող, Թատրոն եւ երաժշտութիւն, «Մշակ», 4 մարտի, N48, Թիֆլիս, 1906:

⁵⁰ Գասպարեան Յ., Ա.Կոստանեանի համերգը Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, «Մշակ», 27 մայիսի, N113, Թիֆլիս, 1910:

⁵¹ Սիրող, Արշակ Կոստանեանի կօնցերտը, «Մշակ», 20 օգոստոսի, N182, Թիֆլիս, 1910:

⁵² Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, էջ 36:

⁵³ Նույն տեղում, էջ 60-61:

⁵⁴ Թատրոն և երաժշտութիւն, «Մշակ», 9 ապրիլի, N74, Թիֆլիս, 1906:

⁵⁵ Սիրող, Թատրոն եւ երաժշտութիւն, «Մշակ», 10 հոկտեմբերի, N223, Թիֆլիս, 1909:

⁵⁶ Ներքին լուրեր, «Մշակ», 7 փետրվարի, N28, Թիֆլիս, 1910:

⁵⁷ Սիրող, Թատրոն եւ երաժշտութիւն, «Մշակ», 23 փետրվարի, N41, Թիֆլիս, 1910:

օպերային թատրոնում: 1903թ. սեպտեմբեր-նոյեմբեր, 1904թ. հունվար ամիսներին Արքունական օպերային թատրոնում Բ.Ամիրջանի մասնակցությամբ բեմադրվում են «Դև», «Կարմեն», «Թագավորի հարսնացուն», «Ռիգոլետտո», «Պիկովայա դամա», «Դուբրովնկա», «Պարահանդես-դիմակահանդես», «Աիդա», «Աֆրիկոսի» օպերաները⁵⁸: 1903թ. փետրվարի 8-ին Թիֆլիսի ժողովրդականի դահլիճում տեղի է ունենում համերգ Բ.Ամիրջանի մասնակցությամբ. նա կատարում է Մ.Եկմալյանի «Լոեց» մեներգը և Տ.Չոխսաճյանի «Ոհ, ինչ անուշ» ռոմանսը: 1906թ. մարտի 28-ի համերգին մասնակցում են Հովհաննես Նալբանդյանը, Տիգրան Նալբանդյանը, Բ.Ամիրջանի աշակերտները⁵⁹: 1909թ. օգոստոսին Բ.Ամիրջանը Ջուբալովի անվան ժողովրդական տանը կազմակերպում է համերգ⁶⁰: Հոկտեմբերի 13-ին Ջուբալովի անվան ժողովրդական տանը Բ.Ամիրջանի և Դավիթ Դավթյանի համատեղ համերգն էր:

1.3. Գործիքային կատարողական արվեստ

Համերգային և մանկավարժական գործունեություն է ծավալել դաշնակահար Հովսեփ Տեր-Դավթյանը, հյուրախաղերով հանդես են եկել ջութակահարներ Դավիթ Դավթյանը, Հովհաննես Նալբանդյանը և Հայկ Կյուտենյանը:

1.3.1. Հովսեփ Տեր-Դավթյան (1862-1938)

Հ.Տեր-Դավթյանը հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունների առաջին կատարողներից էր: 1902թ. մայիսի 5-ին, Թիֆլիսի 2-րդ արական գիմնազիայի դահլիճում տեղի է ունենում Հ.Տեր-Դավթյանի աշակերտների համերգը, որի ավարտին նա հանդես է գալիս դասախոսությամբ⁶¹: Համերգը ստանում է ամենամյա միջոցառման բնույթ: Մեկ տարի անց՝ 1903թ. մայիսի 25-ին, նա կրկին հանդես է գալիս իր աշակերտների հետ: Ավելի մեծ էր աշակերտների թիվը, և համերգային ծրագրում տեղ էին գտել երաժշտական համարներ 8 դաշնամուրի 16 և նույնիսկ 24 կատարողի համար⁶²: Ամենամյա հաշվետու համերգների ավանդույթը Հ.Տեր-Դավթյանը շարունակում է. «...ս.Տեր-Դավթյանը ցոյց տուեց, որ նա լավ մանկավարժ-դաշնակահար է, որ նա ներշնչում է մանուկ սրտերին իրանց յատուկ ձգտումներն ու ուղղությունը...»⁶³:

1.3.2. Դավիթ Դավթյան (1877-1911)

Դավիթ Դավթյանն առաջին անգամ Թիֆլիսի ունկնդրին ներկայացավ 1908թ. փետրվարի 14-ին՝ Արտիստական ընկերության դահլիճում: «...Ծրագրի համաձայն, պ. Դավթյանը պիտի նուագեր մի կտոր միայն, այն է Sarasati-ի «Andalous»-ը: Սակայն ներկայ եղող հասարակությունը, հիացմունքով լսելով իր սիրելի արտիստին, որոտընդոստ ծափահարությամբ և անվերջ bis-երով 4 անգամ բեմ կանչեց պ. Դավթյանին, որից ստիպված երիտասարդ արտիստը նուագեց երեք կտոր ևս: Վերջին անգամ նուագածը «Կոունկն» էր, որը մանաւանդ սքանչելի տպավորություն թողեց»⁶⁴: 1908թ. հոկտեմբերի 30-ին Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում Դ.Դավթյանի մենահամերգն է, իսկ նոյեմբերի 16-ին՝ համերգը կիրակնօրյա իգական դպրոցի օգտին⁶⁵: 1909թ. հոկտեմբերի 13-ին Դ.Դավթյանը Բ.Ամիրջանի հետ համատեղ համերգով հանդես է գալիս Ջուբալովի անվան ժողովրդական տան դահլիճում, իսկ նոյեմբերի 2-ին նրա մենահամերգն է

⁵⁸ Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, Երևան, 2006, էջ 65-75:

⁵⁹ Թատրոն եւ երաժշտություն, «Մշակ», 9 ապրիլի, N74, 1906:

⁶⁰ Հ.Ա., Թատրոն եւ երաժշտություն, «Մշակ», 15 օգոստոսի, N178, Թիֆլիս, 1909:

⁶¹ Ներքին լուրեր, «Մշակ», 7 մայիսի, N96, Թիֆլիս, 1902:

⁶² Սիրող, Ներքին տեսություն. Երաժիշտ Յ.Տեր-Դավթյանի աշակերտների կոնցերտը, «Մշակ», 27 մայիսի, N111, Թիֆլիս, 1903:

⁶³ Մայիլեան Անտ., Թատրոն եւ երաժշտություն, «Մշակ», 27 մայիսի, N113, Թիֆլիս, 1906:

⁶⁴ Artemius, Թատրոն եւ երաժշտություն, «Մշակ», 17 փետրվարի, N38, Թիֆլիս, 1908:

⁶⁵ Աֆիշ, «Մշակ», 16 նոյեմբերի, N255, Թիֆլիս, 1908:

Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում:

1.3.3. Հայկ Կյուտենյան (1886-1972)

Ներկայացվել է Հայկ Կյուտենյանի՝ 1908թ. ապրիլի 3-ին մենահամերգը Թիֆլիսի երաժշտական ընկերության (դպրոցի) դահլիճում⁶⁶, որի ընթացքում հնչել են Հենդելի, Բախի, Ռամոնի, Բեթհովենի, Դվորժակի և Պագանինի ստեղծագործություններից, նաև իր «Danse albanaise»-ը (Ալբանական պար):

1.3.4. Հովհաննես Նալբանդյան (1871-1942)

Հովհաննես Նալբանդյանի թիֆլիսյան հյուրախաղերը տեղի ունեցան 1907-ին: Մարտի 13-ին Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի դահլիճում ջութակահարի համերգն է՝ դաշնակահար Վ.Վ.Պոկրովսկու մասնակցությամբ⁶⁷: Համերգին ընդառաջ՝ «Մշակը» տպագրում է «Ջութակահար Յ.Նալբանդեան» հոդվածը⁶⁸: Համերգը գեղարվեստական մեծ հաճույք է պատճառում ներկաներին⁶⁹: Ջութակահարը ներկայանում է նաև որպես կոմպոզիտոր և կատարում իր գործերից: Համերգին անդրադառնում է նաև «Մշակը»⁷⁰: Մարտի 18-ին Թիֆլիսի երաժշտական ընկերության (դպրոցի) դահլիճում տեղի է ունենում Նալբանդյանի և Պոկրովսկու երկրորդ համերգը, որն ավելի մեծ հաջողություն ունեցավ, քան առաջինը⁷¹: «Պարոնի երաժշտական կարողություն և բնատրույթն մասին այլևս ասելիք չունենք. երկրորդ կոնցերտը եկաւ ամէլի ևս հաստատելու մեր անցեալ անգամ յայտնած կարծիքը»⁷²: Մարտի 23-ին Հավլաբարի թատրոնում կայացած համերգին Նալբանդյանը կատարում է Գրիգի, Սարասատեի, Շոպենի, Ներուդայի, Վենյավսկու, Կյուիի և իր ստեղծագործությունները⁷³: Ապրիլի 3-ին և 8-ին Հ.Նալբանդյանի համերգն է Ջութակի անվան ժողովրդական տանը⁷⁴: «Ջութակահարը բազմիցս մասնակցել է բարեգործական համերգների»⁷⁵: Բացառություն չէր թիֆլիսյան համերգային շրջագայությունը. հոգուտ հայ սովյալների էր Հ.Նալբանդյանի համերգը Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում ապրիլի 2-ին⁷⁶: Հ.Նալբանդյանի թիֆլիսյան հյուրախաղերի արձագանքը հասավ Պետերբուրգ. «Между прочим, он играл скрипичный концерт А. Глазунова, исполнившийся первый раз на Кавказе»⁷⁷.

1. 4. Երաժշտագետներ

1.4.1. Վասիլի Կորգանով (Ղորղանյան) (1865-1934)

Երաժշտագետ, երաժշտական-հասարակական գործիչ, հրապարակախոս

⁶⁶ Սիրող, Թատրոն եւ երաժշտութիւն, «Մշակ», 5 ապրիլի, N76, Թիֆլիս, 1908:

⁶⁷ “Закавказье”, Тифлис, 1907, 16 марта.

⁶⁸ Ջութակահար Յ.Նալբանդեան, «Մշակ», 11 մարտի, 1907:

⁶⁹ Концерт Налбандьяна, “Тифлисский листок”, Тифлис, 1907, 15 марта.

⁷⁰ Ն., Յ.Նալբանդեանի կոնցերտը, «Մշակ», 16 մարտի, 1907:

⁷¹ “Закавказье”, Тифлис, 1907, 21 марта.

⁷² Յ.Նալբանդեանի II կոնցերտը, «Ժամանակ», 20 մարտի, 1907: Համերգի մասին տե՛ս Սիրող, Թատրոն եւ երաժշտութիւն, «Մշակ», 20 մարտի, 1907: Յ.Նալբանդեանի II կոնցերտը, «Ժամանակ», 20 մարտի, 1907: Второй концерт гг. Налбандьяна и Покровского, “Тифлисский листок”, Тифлис, 1907, 20 марта. Յ.Նալբանդեանի II կոնցերտը, «Ժամանակ», 20 մարտի, 1907:

⁷³ Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, էջ 125:

⁷⁴ Նույն տեղում, էջ 126:

⁷⁵ Ասատրյան Ա., Պետերբուրգի կոնսերվատորիայի հայ սանը և պրոֆեսորը. Հովհաննես Նալբանդյան, Ա.Աղայան, Ա.Ասատրյան, Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ, Երևան 2015, էջ 204:

⁷⁶ Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, էջ 126:

⁷⁷ Концертное турне проф. Налбандьяна, “Санкт-Петербургские ведомости”, Санкт-Петербург, 1907, 4 мая.

Վ. Կորգանովը 1900թ. հիմնադրում է գիտական-գրական «Кавказский Вестник» ամսագիրը, որը մինչ 1902թ. հուլիսը խմբագրում և հրատարակում է ինքը⁷⁸: Կորգանովն առաջիններից էր, ով գնահատեց և լուսաբանեց Կոմիտասի գործունեությունը: Նա գերմաներենից թարգմանում և 1900թ. «Кавказский вестник»-ի N1-ում տպագրում է նրա «Հայ եկեղեցական երաժշտություն», իսկ 1902թ. N6-ում՝ «Հայ գեղջուկ պարը» հոդվածները⁷⁹: 1904թ. Կոմիտասի հետ էջմիածնում իր հանդիպումից տպավորված Կորգանովը հանձին նրա տեսնում է իր համախոհին: Նա Կոմիտասին անվանում է «հայ երաժշտության առաջին ուսումնասիրող»: Հայ երաժշտության վերաբերյալ Կորգանովի հայացքները համընկնում են Կոմիտասի հայացքներին սկզբնական փուլում միայն: 1907թ. Կոմիտասի «Հայ քնար» ժողովածուի Փարիզում լույս տեսնելուց հետո Կորգանովը, ով մշտապես դեմ էր ժողովրդական երգի ներդաշնակմանը, բացասական է արտահայտվում ժողովածուի լույս ընծայման կապակցությամբ. նա թերահավատորեն է մոտենում Կոմիտասի և Ն. Տիգրանյանի մշակումներին⁸⁰: Նա ցանկանում էր ժողովրդական երգը տեսնել՝ գրառված անարատ տեսքով, առանց կոմպոզիտորական միջամտության. այլապես երգը դադարում էր ժողովրդական լինելուց⁸¹: Նրա «Кавказская музыка» գիրքը (1901 և 1908թթ.) նյութերի ու փաստերի հավաստիությամբ՝ մեծ արժեք ունի XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ և վրացական երաժշտության ուսումնասիրության տեսակետից: Կորգանովը հսկայական ներդրում ունեցավ հայ և կովկասյան երաժշտության ուսումնասիրության գործում:

1.4.2. Քրիստափոր Կարա-Մուրզա

Ք. Կարա-Մուրզայի գործունեության կարևոր մասն է երաժշտական քննադատությունը: Կյանքի վերջին տարիներն անցկացնելով Թիֆլիսում, նա թղթակցում է թիֆլիսյան «Մշակին», վարում «Օպերային ներկայացումները» էջը՝ անդրադառնալով թիֆլիսյան օպերային վերջին բեմադրություններին, արտիստների ելույթներին, գնահատում արժեքավոր կողմերը և մատնանշում թերությունները: Նա անդրադառնում է 1901թ. փետրվարի 4-ին Արքունական թատրոնում Մասնեի «Մոխրտիկի» ներկայացմանը՝ հիացմունքով խոսելով Ն. Պապայանի մասին⁸², նույն ամսվա 19-ին Թիֆլիսի Արքունական թատրոնում մեկնարկած օպերային ներկայացումների շարքին՝ Ռ. Վազների «Լոնենգրին», Պ. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Ժ. Բիզեի «Կարմեն» և Զ. Վերդիի «Տրավիատա» օպերաների բեմադրություններին՝ ընդգծելով Հ. Տերյան-Ղորղանյան-Կարմենի հաջողությունը⁸³: Կարա-Մուրզան անդրադառնում է Թիֆլիսի ժողովարանի ձմեռային դահլիճում 1901թ. հոկտեմբերի 7-ին կայացած Ստեփան Բարխուդարյանի⁸⁴ և նոյեմբերի 18-ին տեղի ունեցած՝ Մ. Բաբայանի⁸⁵ համերգներին: «Արեւելեան տարրը եւրոպական երաժշտութեան մէջ» հոդվածում Կարա-Մուրզան եզրակացնում է, որ «...մուգիկան բաժանում է երկու գլխաւոր տարրերի – եւրոպականի, որ մշակուած է, և ասիականի, որ դեռ մնում է իբրև հում նիւթ...»⁸⁶: Իսկ Զ. Վերդիին նվիրված հոդվածում՝ գրված կոմպոզիտորի մահվան առթիվ, ներկայացնում է նրա կյանքի և գործունեության մասին ուշագրավ

⁷⁸ **Корганов В.**, Статьи, воспоминания, путевые заметки, биобиблиография, Ереван, 1968, с. 12.

⁷⁹ **Корганов В.**, Кавказская музыка: сборник статей, Тифлис, 1908, с. 43-52.

⁸⁰ **Корганов В.**, Статьи, воспоминания, путевые заметки, биобиблиография, Ереван, 1968, с. 22.

⁸¹ **Корганов В.**, Кавказская музыка: сборник статей, Тифлис, 1908, с. 59.

⁸² **Կարա-Մուրզա**, Օպերային ներկայացումները, «Մշակ», 6 փետրվարի, N27, Թիֆլիս, 1901:

⁸³ **Կարա-Մուրզա**, Օպերային ներկայացումները, «Մշակ», 24 փետրվարի, N42, Թիֆլիս 1901:

⁸⁴ Տե՛ս **Կարա-Մուրզա**, Կոնցերտ, «Մշակ», 9 հոկտեմբերի, N223, Թիֆլիս, 1901:

⁸⁵ **Կարա-Մուրզա**, Կոնցերտ, «Մշակ», 20 նոյեմբերի, N258, Թիֆլիս 1901:

⁸⁶ **Կարա-Մուրզա**, Արեւելեան տարրը եւրոպական երաժշտութեան մէջ, «Մուրճ», հունվար, N1, Թիֆլիս, 1901, էջ 230:

տեղեկություններ⁸⁷: Իր գրախոսականներով և հոդվածներով Ք.Կարա-Մուրզան նպաստեց հայ երաժշտական քննադատության սկզբնավորմանն ու զարգացմանը: Կարա-Մուրզայի ռեցենզիաները մի կողմից՝ պարունակում են Թիֆլիսի երաժշտական կյանքի վերաբերյալ մեծ քանակությամբ փաստական տվյալներ, իսկ մյուս կողմից՝ դրանցում դրսևորվում է հեղինակի վերաբերմունքն այդ իրադարձությունների հանդեպ, բացահայտվում են նրա գեղագիտական հայացքները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԲԱՔՎՈՒՄ, ՇՈՒՇԻՈՒՄ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

2.1 ԲԱՔՈՒ

1901-1910թթ. Բաքվում համերգներով հանդես են եկել Նադեժդա Պապայանը, Ստեփան Բարխուդարյանը, Տիգրան Նալբանդյանը, Արշակ Կոստանյանը, Բեգլար Ամիրջանը, Ալեքսանդր Ասլանովը, Դավիթ Դավթյանը, Քրիստափոր Կարա-Մուրզան, Պողոս Կարա-Մուրզան, Եղիշե Բաղդասարյանը, Կոմիտասը, Անտոն Մայիլյանը ևն:

Բաքվի երաժշտական կյանքում մեծ ներդրում է ունեցել **Անտոն Մայիլյանը** (1880-1942): 1905թ. նա տեղափոխվում է Բաքու և մինչև իր կյանքի վերջը ծավալում ստեղծագործական, երաժշտական-հասարակական և մանկավարժական գործունեություն: Նրա «Թատրոն և երաժշտություն» ամսագրի անդրանիկ համարը լույս տեսավ 1910թ. փետրվարի 28-ին և «...իր տեսակի մեջ միակն էր արևելահայ իրականության մեջ...»⁸⁸: 1908թ. մարտ-ապրիլ ամիսներին դասախոսությամբ և երկու խմբերգային համերգներով հանդես է եկել **Կոմիտասը**: Հայ երաժշտության վերաբերյալ նրա ուսումնասիրություններին և դասախոսությանն անդրադարձել է պետերբուրգյան «Русская музыкальная газета»-ն⁸⁹. Ապրիլի 1-ին Բաքվի ժողովարանի դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի՝ 70 հոգանոց երգչախմբի համերգը⁹⁰: Նույն համերգային ծրագրով նա հանդես է գալիս նաև ապրիլի 4-ին՝ Մարդասիրական ընկերության դահլիճում: 1902 և 1904թթ. համերգներով հանդես է եկել խմբավար, կոմպոզիտոր **Եղիշե Բաղդասարյանը** (1880-1919): Իր կազմած արևելյան գործիքների նվագախմբով նա հանդես է եկել 1902թ. հոկտեմբերի 19-ին Ա.Թադիեևի թատրոնի դահլիճում⁹¹: 1904թ. հունվարի 20-ին, Բաքվի Հասարակական ժողովարանի դահլիճում տեղի է ունենում համերգ՝ Ե.Բաղդասարյանի ղեկավարությամբ. և՛ երգչախումբը, և՛ նվագախումբը ղեկավարում է Ե.Բաղդասարյանը⁹²: Ջութակահար **Դավիթ Դավթյանը** 1902թ. գարնանը հանդես է եկել երկու համերգով⁹³: 1909թ. հոկտեմբերի 28-ին հանդես է եկել Բ.Ամիրջանի հետ համատեղ համերգում⁹⁴: Համերգներով հանդես են եկել Ս.Բարխուդարյանը և Ա.Կոստանյանը: Համերգների կազմակերպմամբ և խմբավարական գործունեությամբ աչքի է ընկել **Ալեքսանդր Ասլանովը**⁹⁵: Սիմֆոնիկ համերգներում հնչել են Ալ.Սպենդիարյանի գործերը:

⁸⁷ Տե՛ս Ք.Կարա-Մուրզա, Ջուզեպպե Վերդի, «Մուրճ», փետրվար, N2, Թիֆլիս, 1901, էջ 274-282:

⁸⁸ Մուրադյան Մ., Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարակազմում, էջ 554:

⁸⁹ Лекции по музыке в России: Баку, «Русская музыкальная газета», 27 апреля, N17, СПб., 1908, стр. 414.

⁹⁰ Սիրող-Քնար, Թատրոն եւ երաժշտութիւն, «Մշակ», 13 ապրիլի, N80, Թիֆլիս, 1908:

⁹¹ Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ե.Բաղդասարյանի ֆ., N75:

⁹² Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ե.Բաղդասարյանի ֆ., N77:

⁹³ «Մշակ», 10 մայիսի, N99, Թիֆլիս, 1902:

⁹⁴ Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N224: Համերգի մասին տե՛ս Թատրոն եւ երաժշտութիւն, «Մշակ», 4 նոյեմբերի, N244, Թիֆլիս, 1909:

⁹⁵ Музыка в провинции: Баку, «Русская музыкальная газета», 4 февраля, N5, СПб., 1901, стр. 155-156.

Բաքվում 1905թ. փետրվարի 6-ին սկիզբ են առնում հայկական կոտորածները: «...երեք օր Բագուի փողոցներում տեղի ունէր կոտորած: Թուրքները կոտորում էին հայերին: Ոչ ոք չէր կարող ասել այս րօպէին, թէ ինչ չափեր է ընդունել այդ գազանութիւնը: Ոչ ոք տանից դուրս չէր գալիս: Դիակները անխնամ թափված էին փողոցներում...»⁹⁶:

2.2. ՇՈՒՇԻՆ՝ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՓՈՔՐԻԿ ՓԱՐԻՉԸ

XX դարի առաջին տասնամյակում Շուշիի երաժշտական կյանքում կարևոր դեր են ունեցել Քրիստափոր Կարա-Մուրզան, Պողոս Կարա-Մուրզան, Ստեփան Դեմուրյանը, Եղիշե Բաղդասարյանը, Գրիգոր Սյունին, Սպիրիդոն Մելիքյանը, Հարություն Մելիքյանը, Ռուբեն Մանասյանը, Արշակ Կոստանյանը, Ստեփան Բարխուդարյանը ևն:

Քրիստափոր Կարա-Մուրզան 1901թ. մեկնում է Շուշի, տեղի 70 սիրողներից կազմում երկսեռ երգչախումբ և հանդես գալիս 4 համերգով՝ մայիսի 20-ին, հունիսի 5-ին, 12-ին և 20-ին⁹⁷: Վերջին համերգն այնքան էր ոգևորել հանդիսատեսին, որ «...Կօնցերտի վերջում մի քանի երիտասարդներ ներս խուժեցին դերասանական առանձնարանը և գրեթե զօրով դուրս բերեցին բազուկների վրա պ. Կարա-Մուրզային և խիտ բազմութեան առաջ օդի մէջ բարձրացրին ուռռաներով և կեցցեներով... Աղմկալի օվաքիայից յետոյ շատերը ներկայացան երաժշտագետին և առանձնակի արտահայտելով իրանց գոհունակութիւնը, բարեմաղթեցին նրան ողջերթ և արատն աջողութիւն...»⁹⁸: Ք.Կարա-Մուրզայի մահից հետո նրա գործը շարունակող Պ.Կարա-Մուրզան նույնպես հանդես է գալիս Շուշիում: Կարա-Մուրզաների համերգները մեծ և կարևոր իրադարձություններ էին Շուշի քաղաքի մշակութային կյանքում: Երաժիշտ-մանկավարժ, կոմպոզիտոր, խմբավար **Ստեփան Դեմուրյանի** (1872-1934) նախաձեռնությամբ կազմակերպվել է 6 խմբական համերգ: **Եղիշե Բաղդասարյանը** կազմակերպում է երգեցիկ խումբ, ստեղծում Շուշիում ժողովրդական գործիքների առաջին անսամբլը, մասնակցում տարբեր համերգների ու հանդեսների՝ մեծ հետաքրքրություն առաջացնելով ունկնդիրների շրջանում⁹⁹: 1901-ի օգոստոսի 1-ին Շուշիի Խանդավիրյան թատրոնում Ե.Բաղդասարյանի ղեկավարությամբ ելույթ է ունենում արևելյան նվագախումբը: Համերգին մասնակցում են երգեցիկ խումբը և մենակատարներ: Դաշնամուրի նվագամասը կատարում է Ե.Բաղդասարյանը¹⁰⁰: Շուշիում ելույթներ է ունեցել կոմպոզիտոր **Գրիգոր Սյունին** (Միդգայան) (1876-1939) (1876-1939): Խուլիսի 24-ին «Շուշու հոգևոր դպրոցի դալիլճում տեղի ունեցաւ երկսեռ խմբի համերգը կօնսերվատօրիայի ուսանող Գր.Միրզոյեանցի նախաձեռնութեամբ: ... Հասարակութիւնը բոլոն ծափահարութեամբ ընդունեց պ. Միրզոյեանին, մանաւանդ նրա ոգևորութեանը չափ չկար, երբ խումբը զինւորական երաժշտական խմբի հետ երգեց «Ձեթունի քալերգը», որը մի քանի անգամ կրկնվեց»¹⁰¹: Պահպանվել են տեղեկություններ **Արշակ**

⁹⁶ **Ա.Բար**, Բագուի աղետալի դէպքերը, «Մշակ», 11 փետրվարի, N20, Թիֆլիս, 1905:

⁹⁷ Համերգների մասին տե՛ս **Արքայիեցի**, Նամակ Շուշուց, «Մշակ», 19 հունիսի, N131, Թիֆլիս, 1901: **Մ.Ղ.**, Կարա-Մուրզայի համերգը Շուշում, «Տարագ», N23, Թիֆլիս, 1901: **Սերմացան**, Նամակ Շուշուց, «Մշակ», 3 հուլիսի, N143, Թիֆլիս, 1901:

⁹⁸ **Սերմացան**, Նամակ Շուշուց, «Մշակ», 3 հուլիսի, N143, Թիֆլիս, 1901:

⁹⁹ Տե՛ս **Կարա-Մուրզա**, Նամակ Շուշուց, Մշակ, 16 օգոստոսի, N179, Թիֆլիս, 1901: Ծրագիր, ԳԱԹ, Երաժշտական բաժին, Ե.Բաղդասարյանի ֆ., N74: Ներքին լուրեր, «Մշակ», 17 օգոստոսի, N180, Թիֆլիս 1902:

¹⁰⁰ Համերգին հնչում են Տիգրան Չուխաճյանի «Ձեթունցիների քայլերգը»՝ Գ.Կալաչենկոյի մշակմամբ, Մ.Եկմայանի «Ով դու բարեկամ» երգը, Ե.Բաղդասարյանի մշակումներն ու ստեղծագործությունները, հայկական և ռուսական ժողովրդական երգեր: Տե՛ս Ծրագիր, ԳԱԹ, Երաժշտական բաժին, Ե.Բաղդասարյանի ֆ., N74:

¹⁰¹ Ներքին լուրեր, «Մշակ», 3 օգոստոսի, N166, Թիֆլիս, 1903: Մյուս համերգների մասին տե՛ս

Կոստանյանի¹⁰² և Ստեփան Բարխուդարյանի¹⁰³ ելույթների մասին:

Այսպիսով՝ 20-րդ դարի առաջին տասնամյակում Շուշին ապրում էր ակտիվ համերգային կյանքով: Համերգային հայտագրերում մեծ տեղ էր գրավում խմբերգային երգեցողությունը: Համերգների ծրագրերում տեղ էին գտնում ինչպես հայ դասականների (Տիգրան Չուխաճյան, Կոմիտաս, Մակար Եկմայան, Քրիստափոր Կարա-Մուրզա, Ալեքսանդր Սպենդիարյան) ստեղծագործությունները, այնպես էլ ժամանակակից կոմպոզիտորների (Ստեփան Դեմուրյան, Եղիշե Բաղդասարյան, Գրիգոր Սյունի) խմբերգերն ու ժողովրդական երգերի խմբերգային մշակումները: Զգալի տեղ էր հատկացվում նաև արևմտաեվրոպական (Ֆ.Շոպերտ, Ջ.Պուչչինի) և ռուս (Մ.Գլինկա, Պ.Չայկովսկի, Ա.Ռուբինշտեյն, Գ.Կազաչենկո) դասական, նաև ուկրաինական (Ն.Լիսենկո) երաժշտության պրոպագանդանը: Հնչել են հայ, ռուսական և վրացական ժողովրդական երգեր:

2.3. ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳ

2.3.1. ԵՐԵՎԱՆ

1901-1910թթ. ընթացքում Երևանի երաժշտական կյանքում իրենց մասնակցությունն են ունեցել Ստեփան Դեմուրյանը, Եղիշե Բաղդասարյանը, Կոմիտասը, Հովհաննես Նալբանդյանը, Արշակ Կոստանյանը և այլք:

1902թ. մարտի 27-ին, Երևանի ակումբի դահլիճում, թեմական դպրոցի իր ղեկավարած երգչախմբով հանդես է գալիս **Ստեփան Դեմուրյանը**: Համերգը, որի ընթացքում հնչում են Ս.Դեմուրյանի, Կարա-Մուրզայի հայկական ժողովրդական երգերի մշակումներից, գրավել էր մեծ թվով հանդիսականներ¹⁰⁴: Ս.Դեմուրյանի հաջորդ համերգը հունիսի 3-ին էր. «Այժմ, երբ այլ ես չը կայ մեր ժողովրդական երգերի շնորհալի ղեկավար Կարա-Մուրզան եւ նրա տեղը բաց է մնում, մի առանձին կարեւորություն ստանում է պ. Դեմուրեանը, որպես հետետող Կարա-Մուրզայի...»¹⁰⁵: Ս.Դեմուրյանից հետո թեմական դպրոցի երգչախմբի ղեկավարությունը ստանձնել էր **Եղիշե Բաղդասարյանը**, ում նախածեռնությամբ 1903թ. ապրիլի 26-ին տեղի է ունենում թեմական դպրոցի աշակերտներից բաղկացած քառաձայն երգչախմբի համերգը¹⁰⁶: **Կոմիտասի** 80 հոգանոց երգչախմբի՝ «Հայ ժողովրդական երգեր ու նվագներ» համերգը տեղի է ունենում 1908թ. փետրվարի 22-ին, քաղաքային ակումբի դահլիճում: Իրոք մենակատարներ հանդես են գալիս Կոմիտասը և Վահան Տեր-Առաքելյանը:

1904թ. փետրվարին Երևանի հանդիսատեսին առաջին անգամ ներկայացվում են օպերաներ: Թեև քաղաքային ակումբը չունեւ օպերա բեմադրելու համար անհրաժեշտ պայմաններ ու հարմարություններ, սակայն ներկայացումներն անցնում են մեծ հաջողությամբ. «Մեզ մօտ հիր էին եկել մի խումբ իտալուհի և իտալացի օպերային երգիչներ, որ բարեկենդանի ամբողջ շաբաթը, երկուշաբթուանից մինչև կիրակի, յաջորդաբար երգեցին կյուբի դահլիճում «Ռիգոլետտո», «Գիտական պատի», «Տրուբադուր», «Տրալիատա», «Ֆաուստ», «Կարմեն» և «Էրնանի» օպերաները. – եօթ օրը – եօթ պիէս: Չը նայած որ խումբը երգում էր անհասկանալի լեզվով – իտալերէն, չը նայած որ մեր շարժական բեմը չէր ներկայացնում բեմական շատ յարմարություններ, այնուամենայնիւ հենց առաջին ներկայացումից խումբը իր ղեկավար պ. Ժ.Գոնսալեսի կառավարութեամբ զրաւեց հանդիսատէսի համակրութիւնը. այնպէս որ դահլիճը միշտ լի էր լինում, իսկ «Ֆաուստի» և «Կարմենի» օրերին նոյնիսկ տոմսակ չէր ճարուում: Երևանը առաջին անգամն էր օպերա

¹⁰² Ներքին լուրեր, «Մշակ» N147, Թիֆլիս, 1902: Ներքին լուրեր, «Մշակ», 7 հուլիսի, N141, Թիֆլիս, 1904:

¹⁰³ Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ե.Բաղդասարյանի ֆ., N76:

¹⁰⁴ Ներքին լուրեր, «Մշակ», N73, Թիֆլիս, 1902թ.:

¹⁰⁵ Բ.Վ., Նամակ Երեւանից, «Մշակ», N124, Թիֆլիս, 1902:

¹⁰⁶ Տե՛ս Ա.-Դ., Ներքին տեսություն, Նամակ Երեւանից, «Մշակ», 30 ապրիլի, N90, Թիֆլիս, 1903:

տեսնում...»¹⁰⁷:

1907թ. ապրիլի 4-ին, Երևանի ակումբի դահլիճում տեղի է ունենում թառահար **Վարդան Բունիաթյանի** համերգը՝ մասնակցությամբ արևելյան գործիքների անսամբլի և 45 հոգուց բաղկացած երգեցիկ խմբի: Իր թիֆլիսյան հյուրախաղերի ընթացքում Երևան է այցելում **Հ.Նալբանդյանը**. նա ելույթ է ունենում 1907թ. ապրիլի 12-ին: 1910թ. մայիսի 8-ին կայանում է **Ա.Կոստանյանի** համերգը Երևանի քաղաքային ակումբի դահլիճում: Երգիչը կատարում է «Լոռեց», «Մի լար, բլբուլ», «Սիրուն գարուն», «Կոունկ» երգերը¹⁰⁸:

XX դարասկզբին Երևանը չունեւ մշտական հարմարեցված դահլիճ համերգների և թատերական ներկայացումների համար: Որոշ ժամանակ դրանք կազմակերպվում էին արական գիմնազիայի դահլիճում, սակայն շուտով տնօրինությունն արգելեց օգտագործել դահլիճն այդ նպատակով: Մշակութային միջոցառումները տեղի էին ունենում քաղաքային ակումբում:

2.3.2. ԷԶՄԻԱԾՆԸ

Էջմիածնում իր բեղուն գործունեությունն է ծավալել Կոմիտասը¹⁰⁹:

1901թ. մարտի 18-ին Գևորգյան ճեմարանում տեղի ունեցած երաժշտական երեկույթին ելույթ է ունենում Կոմիտասի ղեկավարած քառաձայն երգչախումբը: Կոմիտասը հանդես է գալիս «Հայոց եկեղեցական եղանակները» դասախոսությամբ և դաշնամուրային կատարումներով: Ելույթներով հանդես են գալիս նաև Կոմիտասի աշակերտները¹¹⁰:

Հայ երաժշտությանը ծանոթանալու նպատակով 1901թ. մարտի վերջին Էջմիածին է ժամանում ֆրանսիացի երիտասարդ երաժշտագետ, միջնադարյան երաժշտության գիտակ և բանասեր-արևելագետ Պիեռ Օբրին (1874-1910), ում ուսումնասիրությունների առարկան էր նաև հայ երաժշտությունը: Ֆրանսիացի գործընկերոջը հյուրանկայում է Կոմիտասը¹¹¹: Օբրին ունկնդրում է Կոմիտասի դասախոսությունները, ծանոթանում նրա կիրառած ուսումնական մեթոդներին: Հանդիպումից մեկ տարի անց «Անահիտի» 1902թ. սեպտեմբերի համարից սկսած՝ շարունակաբար մի քանի համարներում տպագրվում է Օբրիի «Հայ եկեղեցւոյ երաժշտական դրույթներ» ուսումնասիրությունը:

1901թ. ապրիլին, Լուսավորչի մուտն ի վիրապ տոնի օրը Կոմիտասն իր երգչախմբով կատարում է հոգևոր և ժողովրդական երգեր, հանդես գալիս ժողովրդական երգերի և շարականների մասին դասախոսությամբ, իսկ սեպտեմբերի 29-ին «Հայոց եկեղեցական ութ ձայնի մասին» զեկուցումով հանդես է գալիս Էջմիածնի ճեմարանում տեղի ունեցած գիտական-գրական երեկույթին: 1903թ. մարտի 26-ին ճեմարանում կազմակերպում է երաժշտական երեկո: «Կոմիտասի դասախոսութենէն ետք, քառաձայն երգչախումբը կը կատարէ 20 ժողովրդական երգ՝ անոր ներդաշնակւումով»¹¹²: Հնչում են հատվածներ Գունդի «Ֆաուստ», Վազների «Թոջող հոլանդացին» օպերաներից և Շուբերտի գործերից: Կոմիտասը խոսում է ծայնագրող սարքի գյուտի մասին, որն այն ժամանակ աննախադեպ նորույթ էր: Համերգի երկրորդ բաժնում երգչախմբի կատարմամբ հնչում են Կոմիտասի մշակած ժողովրդական երգերը¹¹³:

¹⁰⁷ **Գ.Ա.**, Երեան, «Տարազ», N7, Թիֆլիս, 1904:

¹⁰⁸ Թատրոն եւ երաժշտութիւն, «Մշակ», 12 մայիսի, N100, Թիֆլիս, 1910:

¹⁰⁹ Էջմիածնում 1903թ. օգոստոսին լույս է տեսնում Կոմիտասի և Մ.Աբեղյանի կազմած «Հազար ու մի խաղ» խորագրով ժողովրդական երգերի առաջին հիսնյակը, իսկ 1905թ. Սեպտեմբերին՝ երկրորդ հիսնյակը: 1904թ. սեպտեմբեր-նոյեմբերին Կոմիտասը գերմաներենից հայերեն է թարգմանում Ֆրից Արլբրիգի «Ձայնամարգություն» աշխատությունը:

¹¹⁰ Ներքին լուրեր, «Մշակ», 24 մարտի, N66, Թիֆլիս, 1901:

¹¹¹ «Արարատ», ապրիլ, N4, Ս.Էջմիածին, 1901, էջ 216:

¹¹² Գրական նշխարը Կոմիտաս վարդապետի բեղուն գրչեն, Մոնթբէլ, 1994, էջ 16-17:

¹¹³ Տե՛ս **Վարդ.**, «Տարազ», N14, Թիֆլիս, 1903:

Կոմիտասը ծրագրում էր, բացի երգչախմբից, ճեմարանում կազմակերպել նաև նվագախումբ: Դա նրան հաջողվում է, և 1904-ից իր համերգային ծրագրերում ներառում է հոգևոր երաժշտության մշակումներ երգչախմբի համար՝ նվագախմբի նվագակցությամբ: «...Եւ ահա սաքսոֆոն և այլ գործիքների որոտը, ծնծղաների ցնծական հնչյունները մի ախորժ ներդաշնակութեամբ միացած մարդկային ձայնի զարթ ու լիահնչուն դաշնակների հետ՝ թնդեցնում է դահլիճը և երկրորդ, երրորդ դաշնակից դուք ևս երևակայութեան թևերին ապալինած դէպի վեր եք սլանում, թողնելով դահլիճը դուք մի այլ աշխարհի էք սաւառնում...»¹¹⁴:

2.3.3. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Ալեքսանդրապոլի բացառիկ երաժշտական աշխուժության մասին էր իր հոդվածներում և ինքնակենսագրական ակնարկներում նշում կոմպոզիտոր և դաշնակահար **Նիկողայոս Տիգրանյանը** (1856-1951): Կոմպոզիտորն առնչվում էր տեղի աշուղների, սազանդարների, երգիչների հետ, ծանոթանում նրանց արվեստին ու ազգային երաժշտության ժանրերին՝ զարգացնելով դրանք իր ստեղծագործության մեջ: Նա իր հայրենի քաղաքի երաժշտական կյանքում մեծ ավանդ է ունեցել¹¹⁵: Կոմպոզիտոր **Արմեն Տիգրանյանը** (1879-1950) կազմակերպել է քառաձայն երգչախմբեր՝ նպաստելով բազմաձայնության տարածմանը¹¹⁶: Ա.Տիգրանյանի ալեքսանդրապոլյան գործունեության կարևոր մասն են նրա թղթակցությունները 1907-ից լույս տեսնող «Ախուրյան» թերթին. նրա երաժշտական-քննադատական հոդվածներում և գրախոսականներում լուսաբանվում էին քաղաքի երաժշտական կյանքի նորություններն ու միջոցառումները¹¹⁷: Երաժիշտ-մանկավարժ, տեսաբան, բանահավաք, խմբավար, երաժշտական-հասարակական գործիչ և նկարիչ **Արշակ Բրուտյանը** (1864-1936)՝ հայ ժողովրդական երգերի առաջին ժողովածուների ստեղծողներից մեկը, իր կազմակերպած երգչախմբերի համերգային գործունեությամբ էապես նպաստեց բազմաձայնության տարածմանը: Նա նվիրվել է մանկավարժական գործունեությանը՝ շուրջ կես դար դասավանդելով Ալեքսանդրապոլի գրեթե բոլոր դպրոցներում: Ա.Բրուտյանը կազմակերպել է հնչեղ ու զեղեցիկ ձայն ունեցող սիրողներից կազմված երկսեռ երգչախմբեր, որոնց հրապարակային համերգների ժամանակ սեփական ստեղծագործությունների կատարմամբ հանդես են եկել Զիվանին ու Շերամը, Նիկողայոս Տիգրանյանը՝ որպես դաշնակահար, Արմեն Տիգրանյանը՝ որպես երգիչ: Իբրև մեներգիչ՝ իր զեղեցիկ տենորով հաճախ բեմ է բարձրացել Ա.Բրուտյանը:

Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքում աշխուժություն է բերել **Անտոն Մալիյանը**: Երաժշտական-ուսուցչական ակտիվ գործունեությամբ աչքի է ընկել խմբավար **Պարույր Բաբայանը**¹¹⁸: Մեծ իրադարձություն էին **Հովհաննես Նալբանդյանի, Արշակ Կոստանյանի և Բեգլար Ամիրջանի** համերգները: Համերգներով հանդես են եկել մի շարք երաժիշտ-կատարողներ. դրամատիկական տենոր Ստեփան Բարխուդարյանը

¹¹⁴ Մ.Ք., Պե՛տք է քաջալերել թե՛ ոչ, «Տարագ», N32, Թիֆլիս, 1904:

¹¹⁵ Տե՛ս Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ն.Տիգրանյանի ֆ., N293: **Գեղամ Արմեն**, Գեղարևստ. Քաղաքային ժողովրդական տուն, «Ախուրեան», 12 սեպտեմբերի, N62, Ալեքսանդրապոլ, 1910 թ.:

¹¹⁶ Ա.Տիգրանյանի համերգային գործունեության մասին տե՛ս Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Տիգրանյանի ֆ., N186: ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Տիգրանյանի ֆ., N188: ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N63 թ.:

¹¹⁷Տե՛ս **Տիգրանյան Ա.**, Գեղարևստ, «Ախուրեան», 12 դեկտեմբերի, N76, Ալեքսանդրապոլ, 1907: **Տիգրանյան Ա.**, Գեղարևստ, «Ախուրեան», 23 փետրվարի, N15, Ալեքսանդրապոլ, 1908: **Տիգրանյան Ա.**, Գեղարևստ, «Ախուրեան», 10 մայիսի, N34, Ալեքսանդրապոլ, 1909 թ.:

¹¹⁸ Տե՛ս **Տիգրանյան Ա.**, Գեղարևստ, «Ախուրեան», 23 փետրվարի, N15, Ալեքսանդրապոլ, 1908: **Ոստիկ**, Ա.Փրկիչ դպրոցի տարեկան հանդեսը, «Ախուրեան», 13 հունիսի, N42, Ալեքսանդրապոլ, 1909: Ներքին Լուրեր, «Ախուրեան», 17 դեկտեմբերի, N89, Ալեքսանդրապոլ, 1909:

(1902)¹¹⁹, երգչուհիներ Ա.Աբրահամյանը (1904)¹²⁰ և Ս.Մելիք-Աղամյանը (1905)¹²¹, երգիչ Սարգիս Մուրադյանը՝ Մեֆիստոֆելի դերերգով՝ Շ.Գունոյի «Փաուստ» օպերայում (1908)¹²², ռուս երգչուհի Մարիա Դոլինան և հայ երգչուհի Սյուզաննա Մազակին (1910)¹²³:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թիֆլիսի, Բաքվի, Շուշիի, Երևանի, Էջմիածնի և Ալեքսանդրապոլի հայ երաժշտական կյանքը 1901-1910 թթ. եղել է իրադարձություններով հարուստ, և նրանցից յուրաքանչյուրը նպաստել է հայ երաժշտարվեստի առաջընթացին:

Խմբավար-կոմպոզիտորներն իրենց կազմած երգեցիկ խմբերի համերգներով, որոնց ծրագրերում ընդգրկվել են դասական (Տիգրան Չոլսաճյան, Կոմիտաս, Մակար Եկմալյան, Քրիստափոր Կարա-Մուրզա) և ժամանակակից կոմպոզիտորների (Ստեփան Դեմուրյան, Եղիշե Բաղդասարյան, Գրիգոր Սյունի ևն) խմբերգերն ու ժողովրդական երգերի խմբերգային մշակումները, նպաստել են հայ իրականության մեջ բազմաձայնության տարածման գործին:

Օպերային երգիչներն ու երգչուհիները նպաստել են ռուսական օպերային արվեստի զարգացմանը: Երաժիշտ-կատարողներն իրենց համերգների ծրագրերում արևմտավորապահ և ռուս դասական, ինչպես նաև ժամանակակից կոմպոզիտորների գործերի կողքին կատարել են հայ կոմպոզիտորների երկերը՝ դրանով իսկ ձեռք բերելով հայապահպան առաքելություն:

Կատարվել են երաժշտագիտական ուսումնասիրություններ, երաժշտական քննադատության ասպարեզում հանդես են եկել կոմպոզիտորները, ովքեր մամուլում տպագրված իրենց հոդվածներով ժամանակավորապես դարձել են Թիֆլիսի և Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքի տարեգիրը:

Երևանում առաջին անգամ օպերաներ են բեմադրվել 1904-ին. փետրվարի 2-8-ը իտալական օպերային խումբը ներկայացրել յոթ օպերա՝ «Ռիգոլետտո», «Տրավիատա», «Փաուստ», «Տրուբադուր», «Էռնանի», «Գեղջկական պատիվ» և «Կարմեն»:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Մելքոնյան Դ.**, Երաժշտական կյանքը Երևանում 1901-1910 թթ., ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 2017, 1 (70), էջ 240-249:
2. **Մելքոնյան Դ.**, Երաժշտության հարցերն Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջան. նվիրվում է Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին (10-11 նոյեմբերի, 2015), Նստաշրջանի նյութեր, Երևան, 2016, էջ 118-126:
3. **Մելքոնյան Դ.**, Երգչուհի Նադեժդա Պապայանի 1904 թվականի թիֆլիսյան հյուրախաղերը, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 2016, 4 (69), էջ 266-272:
4. **Մելքոնյան Դ.**, Ջութակահար Հովհաննես Նալբանդյանի 1907 թվականի թիֆլիսյան հյուրախաղերը, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 2016, 3 (68), էջ 235-241:
5. **Մելքոնյան Դ.**, Կոմիտասն իր նամակների հայելիում, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական իններորդ նստաշրջան (14 նոյեմբերի, 2014), Նստաշրջանի նյութեր, Երևան, 2015, էջ 152-159:

¹¹⁹ Ներքին լուրեր, «Մշակ», N17, Թիֆլիս 1902:

¹²⁰ ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N48:

¹²¹ ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N62:

¹²² ԳԱԹ, երաժշտական բաժին, Ս.Մուրադյանի ֆ., N47:

¹²³ **Գեղամ Արմեն**, Գեղարուստ. Մ.Դոլինայի համերգը, «Ափստրեան», 18 մարտի, N18, Ալեքսանդրապոլ, 1910:

МЕЛКОНЯН ДАВИД ГРАНТОВИЧ
АРМЯНСКАЯ МУЗЫКАЛЬНАЯ ЖИЗНЬ В ЗАКАВКАЗЬЕ
(1901-1910)

Первое десятилетие 20-го века стало важной вехой в истории армянской музыки. Этому способствовал ряд знаковых событий в армянской музыкальной жизни. Так, была заложена основа национальной классической музыки, с особым размахом развивалось исполнительское искусство, сформировалось национальное музыковедение, активизировалась музыкально-общественная деятельность представителей культуры.

Целью диссертации является всестороннее исследование армянской музыкальной жизни Закавказья в первом десятилетии 20-го века. В диссертации впервые представлена исчерпывающая информация об армянской музыкальной жизни в Тифлисе [Тбилиси], Баку, Шуши и в городах Эривань [Ереван], Эчмиадзин и Александрополь [Гюмри] Эриванской губернии.

Для создания панорамы армянской музыкальной жизни в Закавказье начала 20-го века диссертантом проведена тщательная работа по изучению публикаций в закавказской и российской прессе указанного периода, освещающих концертную жизнь в таких городах Закавказья как Тифлис, Баку, Шуши, Эривань, Эчмиадзин и Александрополь.

В процессе исследования деятельности, осуществляемой армянскими музыкантами в административном и культурном центре Закавказья – Тифлисе, особое внимание было уделено тифлисским гастролем композиторов-дирижеров Христофора Кара-Мурзы, Макара Екмаляна и Комитаса, вокалистов Маргарит Бабаян, Эгине Корганян, Надежды Папаян, Степана Бархударяна, Аршака Костаняна, Тиграна Налбандяна, Беглара Амирджана и других, а также инструменталистов – пианиста Овсеп Тер-Давтяна, скрипачей Давида Давтяна, Айка Кютеняна и Ованнеса Налбандяна. Рассмотрена музыковедческая деятельность Василия Корганова (Барсег Корганян), основавшего и издававшего научно-литературный ежемесячник “Кавказский вестник” (1900-1904), а также деятельность композитора Христофора Кара-Мурзы в качестве музыкального критика: именно его публикациям мы обязаны дошедшей до нас обширной документальной информацией о музыкальной жизни Тифлиса интересующего нас периода. Внимание уделяется и деятельности Гарегина Левоняна, усилиями которого был создан журнал

“Гегарвест [Искусство]” (Тифлис, 1908); в нем впервые в Закавказье были напечатаны нотные тексты произведений армянских композиторов.

Диссертант прослеживает концертную деятельность Комитаса, Егише Багдасаряна и Давида Давтяна в промышленном центре Закавказья – Баку, композиторскую и общественную деятельность Антона Маиляна, основавшего уникальный в восточно-армянской действительности ежемесячник “Театр и музыка” (Баку, 1910), знакомявший читателей с событиями в музыкальной жизни города.

Рассматривается деятельность “Закавказской консерватории” и события музыкальной жизни в Шуши, прозванном маленьким Парижем Закавказья; представлен обзор имевших там место концертов Христофора Кара-Мурзы, Степана Демурияна, Егише Багдасаряна, Григора Сюни, Аршака Костаняна и других.

При изучении фактов музыкальной жизни в Эриванской губернии диссертант особо остановился на концертной деятельности Степана Демурияна, Егише Багдасаряна и Комитаса в Ереване.

Результаты исследования позволили установить, что в Ереване опера впервые прозвучала в 1904 г., когда – в отсутствие необходимых для оперных постановок условий – в неделю со 2-го по 8-е февраля здесь выступила итальянская оперная труппа с семью оперными спектаклями.

Исследование музыкальной жизни другого культурного центра Эриванской губернии, Эчмиадзина, сосредоточено на творчестве Комитаса. При оценке культурной жизни Александрополя на первый план выдвигалась деятельность композиторов Никогайоса Тиграняна и Армена Тиграняна, музыковеда Аршака Брутяна, гастрологи исполнителей Маргарит Бабаян, Ованнеса Налбандяна и Аршака Костаняна.

Материалом для проведения научной работы послужили публикации в периодической печати того времени (“Мшак”, “Тараз”, “Базмавэп”, “Ахурян”, “Кавказский вестник”, “Тифлисский листок”, “Закавказье”, “Русская музыкальная газета”, “Театр и искусство”, “Санкт-Петербургские ведомости” и др.) и соответствующие документы из архивов А. Маиляна, Е. Багдасаряна, Б. Амирджаняна, Н. Тиграняна, М. Бабаян, А. Тиграняна, О. Налбандяна и других, хранящихся в Музее литературы и искусства имени Е. Чаренца в Ереване.

Диссертация состоит из введения, двух глав (Глава А – “Армянская музыкальная жизнь в Тифлисе”, Глава Б – “Армянская музыкальная жизнь в Баку, Шуши и Эриванской губернии”), выводов и списка использованной литературы.

DAVID MELKONYAN
ARMENIAN MUSICAL LIFE IN THE TRANSCAUCASUS
(1901-1910)

The first decade of the 20th century turned out to be a major landmark in the history of Armenian music. Certain phenomena greatly facilitated to this. Thus, foundation for national classical music and national musicology had been laid, performing art was progressing rapidly and the musical-social activity of cultural figures was increasing noticeably.

The goal of the dissertation is to comprehensively investigate the Armenian musical life of the Transcaucasus in the first decade of the 20th century. For the first time ever, exhaustive information has been made available about Armenian musical activities and events in Tiflis [Tbilisi], Baku, Shushi and in the cities of Erivan [Yerevan], Ejmiatzin and Aleksandropol [Gyumri] of Erivan Province.

To produce the panorama of Armenian musical life in the early twentieth-century Transcaucasus, the applicant has thoroughly scrutinized the printed media of Transcaucasia and Russia during the period in question, particularly the publications which shed light on the concert events in Tiflis, Baku, Shushi, Erivan, Ejmiatzin and Aleksandropol.

When examining the activities carried out by Armenian musicians in the administrative and cultural center of Transcaucasia – Tiflis, special attention was paid to the tours in the city of the composer-conductors Christopher Kara-Murza, Makar Yekmalyan and Komitas, the vocalists Margarit Babayan, Heghine Korghanyan, Nadejhda Papayan, Stepan Barkhudaryan, Arshak Kostanyan, Tigran Nalbandyan, Beglar Amirjan and others, as well as the instrumentalists – the pianist Hovsep Ter-Davtyan, the violinists David Davtyan, Hayk Kyutenyan and Hovhannes Nalbandyan. The musicologist Vasily Korganov (Barsegh Korghanyan) had founded the scientific-literary monthly “Kavkazskiy vestnik [Caucasian Herald]” (1900-1904); the composer Christopher Kara-Murza acted as a music critic too: it is mostly thanks to his publications that now vast documental information is available about the musical life in Tiflis in the period at issue. Another cultural figure, Garegin Levonyan, had found the “Gegharvest [Art]” magazine (Tiflis, 1908); in it, for the first time in the Transcaucasus, musical texts of the works by Armenian composers were printed.

The applicant traced the concert activities carried out by Komitas, Yeghishe Bagdasaryan and David Davtyan in the industrial center of Transcaucasia – Baku, as well as Anton Mailyan’s efforts as a composer and public figure: he established a unique in the Eastern-Armenian reality magazine “Theater and Music” (Baku, 1910), which covered all the news about musical life in Baku.

The activity of the “Transcaucasian Conservatory” and the musical life of Shushi, nicknamed *small Paris of Transcaucasia*, are given consideration;

overviews of the concerts held there by Christopher Kara-Murza, Stepan Demuryan, Yeghishe Bagdasaryan, Grigor Syuni, Arshak Kostanyan and others are provided.

At examining the facts of musical life in Erivan Province, particular attention is given to the concerts of Stepan Demuryan, Yeghishe Bagdasaryan and Komitas in the city of Yerevan.

The results of research allowed concluding that in Yerevan, opera was performed for the first time in 1904, when – at the absence of proper conditions for staging an opera – during the week from February 2nd through 8th, an Italian troupe performed seven operatic spectacles here.

The research of musical life in another cultural center of Erivan Province – Ejmiatzin, is focused on Komitas's creativity, while that of the composers Nikoghayos Tigranyan and Armen Tigranyan and the musicologist Arshak Brutyan, as well as the concert tours of the performers Margarit Babayan, Hovhannes Nalbandyan and Arshak Kostanyan were highlighted when describing the events in yet another cultural center of Erivan Province – Aleksandropol.

The research work was carried out based on the publications in the periodicals of the time (“Mshak”, “Taraz”, “Bazmavep”, “Akhuryan”, “Caucasian Herald”, “Tiflis Leaflet”, “Transcaucasia”, “Russian Music Gazette”, “Theater and Arts”, “Saint-Petersburg Bulletin”, etc.) and the appropriate documents from the archives of A. Mailyan, Ye. Bagdasaryan, B. Amirjanyan, N. Tigranyan, M. Babayan, A. Tigranyan, H. Nalbandyan and others, kept in the Yeghishe Charents Museum of Literature and Arts in Yerevan.

The dissertation consists of an introduction, two chapters (Chapter A – “Armenian Musical Life in Tiflis”, Chapter B – “Armenian Musical Life in Baku, Shushi and Erivan Province”), conclusions and the list of references.

Thus, the Armenian musical life in the cities of Tiflis, Baku, Shushi, Yerevan, Ejmiatzin and Aleksandropol in 1901-1910 abounded in events and activities; the mentioned cities, due to their historical distinctiveness, were each essential in its own way for the advancement of Armenian music art.

The composer-conductors included interpretations of folk songs and choral works both by classical (Komitas, Makar Yekmalyan, Christopher Kara-Murza) and contemporary composers (Stepan Demuryan, Yeghishe Bagdasaryan, Grigor Syuni, etc.) in the concerts programs of their choruses, thereby contributing to the popularization of polyphony among the Armenian audience.

The opera singers performing in Russia promoted the advancement of Russian operatic art. In the spirit of the concept of preserving the Armenian identity, along with the creations of Western European and Russian classical and contemporary composers, Armenian musicians always included in their concert programs compositions by their compatriots.